ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ
УЧЕНЫЕ ЗАПИСКИ ЕРЕВАНСКОГО ГОСУДАРСТВЕННОГО УНИВЕРСИТЕТА

Երկրաբանություն և աշխարհագրություն 3, 2011 *Геология и география*

Աշխարհագրություն

УДК 911.3.711.4

Ա. Հ. ՊՈՏՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՏԱՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ ՇԱՐԺԸՆԹԱՑԻ ՄԻ ՔԱՆԻ ՀԱՐՑԵՐ

Յուրաքանչյուր երկրում տարաբնակեցման մեջ տեղի ունեցած փոփոխությունները և զարգացման առկա միտումներն էական ազդեցություն են թողնում, ինչպես հասարակության տարածքային կազմակերպման, այնպես էլ տնտեսության տարբեր ոլորտների վրա:

Լինելով հասարակության տարածքային կազմակերպման հենքը, տարաբնակեցումը ձևավորվում և զարգանում է որոշակի բնաաշխարհագրական, պատմական, սոցիալ-տնտեսական և քաղաքաաշխարհագրական պայմաններում: Նրա ձևավորման ու զարգացման բնաաշխարհագրական գործոնները հիմնականում փոփոխական չեն: Իսկ ահա, մյուս գործոնները ժամանակի ընթացքում ենթարկվում են փոփոխությունների, փոփոխություններ առաջացնելով նաև տարաբնակեցման մեջ: Բնակչության շարժընթացի և տարաբնակեցման մեջ տեղի ունեցող փոփոխությունների առումով մեծ է սոցիալ-տնտեսական գործոնների դերը: Ժողովրդագրական իրավիճակի պատկերը, տնտեսության զարգացման տեմպերը, նրանում տեղի ունեցող փոփոխությունները և տրանսպորտային ցանցն այն դինամիկ գործոններն են, որոնցից կախված է տվյալ երկրի կամ տարածաշրջանի տարաբնակեցման զարգացումը:

Կյանքի սոցիալացման ժամանակակից պայմաններում, տարաբնակեցման մեջ նշանակալից փոփոխություններ են մտցնում սոցիալական բնույթի այնպիսի գործոններ, ինչպիսիք են՝ բնակչության ապրելակերպը, նրա պահանջմունքների բնույթը, աճն ու կառուցվածքը, ծառայությունների ոլորտի զարգացումը, բնակչության կենսագործունեության ռիթմերը և այլն:

ՀՀ ներկա սոցիալ-տնտեսական զարգացման ռազմավարական նշանակության հիմնահարցերի թվում առանձնահատուկ նշանակություն ունեն նրա տարածքի հնարավորինս հավասարաչափ ու կայուն բնակեցումը, բնակչության՝ մի վայրում գերկենտրոնացման և մյուս վայրերում՝ ապակենտրոնացման արգելակումը, բնակչության տարաբնակեցման բարդ և հակասական գործընթացի գիտական կառավարումը: Այդ գործընթացի կարևոր բաղադրիչներից են գյուղական տարաբնակեցման մեջ կատարվող փոփոխությունները, որոնց ներքին մեխանիզմների բացահայտման և արտաքին գործոնների վերլուծության ու գնահատման միջոցով է միայն հնարավոր մշակել և իրականացնել այնպիսի սոցիալ-տնտեսական և ժողովրդագրական քաղաքականու-

թյուն, որն ուղղված կլինի գյուղական բնակչության նյութական և հոգևոր պահանջմունքների բավարարմանը, գյուղատնտեսական արտադրության ինտենսիվացմանը, բնակչության միգրացիայի կառավարմանը, աշխատանքային ռեսուրսների արդյունավետ օգտագործմանը:

ՀՀ տարածքի բնաաշխարհագրական պայմանների խիստ բազմազանությունը և անցած տասնամյակների ընթացքում տեղի ունեցած քաղաքական և սոցիալ-տնտեսական իրադարձությունները, նշանակալի ազդեցություն են թողել հանրապետության գյուղական տարաբնակեցման շարժընթացի և զարգացման վրա:

ՀՀ գյուղական բնակավայրերի բնակչության թվաքանակի տվյալների վերլուծությունը ցույց է տալիս, որ անցած մեկուկես տասնամյակի ընթացքում նշանակալից փոփոխություններ են տեղի ունեցել գյուղական տարաբնակեցման մեջ: Հարյուրավոր գյուղական բնակավայրերում նկատելիորեն պակասել է առկա և մշտական բնակչության թիվը: Այս երևույթն առավել անցանկալի դրսևորումներ ունի մինչև 200 բնակիչ ունեցող գյուղերում, որոնց զգալի մասը կանգնած է բնազրկման վտանգի առաջ: Խախտվել է բնակչության սեռատարիքային կառուցվածքը, առաջացել է անցանկալի ժողովրդագրական իրավիճակ: Դրությունն առավել տագնապալի է երկրի սահմանամերձ և բարձրալեռնային շրջանների գյուղական բնակավայրերում: Այդպիսի շրջաններից բնակչության հեռացումն ու բնակավայրերի լքումը կարող է նվազեցնել հանրապետության տարածքի «տնտեսական տարողունակությունը»:

Աղյուսակ 1

ՀՀ գյուղական բնակչության թվաքանակի շարժընթացն ըստ մարզերի [1]

ՀՀ մարզեր	Գյուղական բնակչության թիվն ըստ մարզերի				
	1995	2001		2006	2010
		առկա	մշտական	մշտական	մշտական
Արագածոտնի	107419	96671	105437	120863	117843
Արարատի	200480	179196	192131	193519	201687
Արմավիրի	191797	166995	177941	205303	208469
Գեղարքունիքի	162301	144513	158693	170903	173008
Լոռիի	122918	104667	116455	108167	114014
Կոտայքի	128066	109985	118478	125654	125857
Շիրակի	120966	95944	109129	121140	121367
Սյունիքի	47303	46051	48537	50061	50882
Ծայոց ձորի	39120	34902	36392	37875	38392
Կավուշի	85228	78156	83665	78728	79044
Ընդամենը ՀՀ-ում	1205598	1057080	1146858	1212213	1230493

Հատկանշական է այն փաստը, որ գյուղական բնակավայրերի վերը նշված հիմնախնդիրներն, եթե նախկինում բնորոշ էին հիմնականում բարձրալեռնային և սահմանամերձ բնակավայրերին, ապա այժմ՝ նման հիմնախնդիրներ ունեն հանրապետության գյուղական բնակավայրերի մեծ մասը, այսինքն՝ հիմնախնդիրը համապետական տարածում ունի:

Ըստ աղյուսակի տվյալների վերջին մեկուկես տասնամյակի ընթացքում (1995–2010 թթ.) հանրապետության գյուղական մշտական բնակչության բացարձակ թիվն ավելացել է ընդամենը 24895-ով (2%-ով): 2001 թ. մարդահամարի տվյալներով, հանրապետությունում գյուղական առկա բնակչության թիվը

մոտ 90 հազարով պակաս էր մշտական բնակչության թվից: Չնայած, որ վերջին տարիներին հանրապետության գյուղական բնակչության առկա թվաքանակի վերաբերյալ չկան վիճակագրական պաշտոնական տվյալներ, սակայն մեր դիտարկումները ցույց են տալիս, որ հանրապետությունում գյուղական բնակչության մշտական և առկա թվաքանակի վերը նշված տարբերությունը ոչ միայն պահպանվում է, այլ էլ ավելի է մեծացել: Այս մասին է խոսում նաև այն փաստը, որ 2006–2010 թթ. ընթացքում հանրապետության գյուղական մշտական բնակչության թիվը նվազել է համեմատաբար բարենպաստ բնաաշխարհագրական և սոցիալ-տնտեսական զարգացման պայմաններ ունեցող այնպիսի մարզում, ինչպիսին Արագածոտնն է (աղյ. 1): Մարզի 111 գյուղական համայնքներից 62-ում 2006–2010 թթ. դիտվել է գյուղական մշտական բնակչության թվի նվազում: Ընդ որում, բնակչության թվի նվազում է դիտվել ոչ միայն փոքր և միջին գյուղական բնակավայրերում, այլ նաև մեծ և խոշոր գյուղերում (Արագածավան՝ 6478–5870, Արտենի՝ 3765–3565, Բյուրական՝ 4753–4592, Ծաղկահովիտ՝ 2161–2068, Մաստարա՝ 2765–2321, Կաթնաղբյուր՝ 1583–1309 և այլն): Արմավիրի մարզում գյուղական մշտական բնակչության թիվը նվազել է այնպիսի խոշորագույն և խոշոր գյուղական համայնքներում, ինչպիսիք են՝ Նալբանդյանը (5827–5472), Բամբակաշատը (3777–3201), Հայթաղը (3734–3141), Ակնալիճը (3543–3160) և այլն:

Շիրակի մարզի 116 գյուղական համայնքներից 2010թ.-ին 2006թ.-ի համեմատությամբ մշտական բնակչության թիվը նվազել է 55 գյուղական համայնքներում: Մարզում բնակչության թիվը նվազել է ոչ միայն փոքր և միջին մեծության գյուղերում, այլ մեծ, խոշոր և նույնիսկ խոշորագույն գյուղերում (Ախուրյան՝ 10013–9643, Աշոցք՝ 2882–2482, Պեմզաշեն՝3370–3249, Ոսկեհասկ՝ 3731–2516, Երազգավարս՝ 1745–1659, Մայիսյան՝ 2092–1972 և այլն): Սյունիքի մարզում 2006 թ.-ի համեմատությամբ 2010 թ. գյուղական մշտական բնակչության թիվը ավելացել է 821-ով, սակայն մարզի 102 գյուղական համայնքներից 36-ում բնակչության թիվը նվազել է: Մարզում գյուղական բնակչության թվի ավելացումը տեղի է ունեցել գլխավորապես Գորիսի տարածաշրջանի մեծ և խոշոր գյուղերի հաշվին (Խնձորեսկ, Կոռնիձոր, Շինուհայր, Խոտ, Խնածախ և այլն): Վայոց ձորի և Տավուշի մարզերում, 2006–2010 թ.-ին գյուղական բնակչությունն ավելացել է համապատասխանաբար 517-ով և 316-ով, այդուհանդերձ այս մարզերի 41 գյուղական համայնքներում ևս տեղի է ունեցել բնակչության թվի նվազում համեմատաբար մեծ գյուղերում (Ագարակաձոր, Արենի, Արտաբույնք, Ելփին, Զառիթափ, Խաչիկ, Ռինդ, Այգեձոր, Արծվաբերդ, Արճիս, Կոթի, Կողբ, Նորաշեն, Չորաթան, Չինարի, Վերին Կարմիր աղբյուր և այլն):

Կոտայքի, Գեղարքունիքի և Լոռու մարզերում, վերջին տարիների ընթացքում գյուղական բնակչության ընդհանուր թվի որոշակի աճ կա, սակայն առանձին բնակավայրերի վիճակագրական տվյալների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այս մարզերում ևս զգալի թվով գյուղական համայնքներում 2006–2010 թթ. ընթացքում տեղի է ունեցել բնակչության թվի նվազում:

Բնակչության թվի նվազումը տեղի է ունեցել ոչ միայն փոքր և միջին մեծության գյուղերում, այլ նաև մեծ, խոշոր և խոշորագույն գյուղերում: Այսպես, 2006–2010 թթ. ՀՀ խոշորագույն գյուղերից մեկում՝ Վարդենիկում բնակչության թիվը նվազել է 22-ով, Կոտայքի մարզի Առինջ գյուղում՝ 288-ով, Քանաքեռավանում՝ 208-ով, Քասախում՝ 281-ով, Լոռու մարզի Մարգահովիտ

գյուղում՝ 293-ով, և այլն: Ըստ մարդաշատության խմբերի հանրապետության գյուղական տարաբնակեցման շարժընթացի վերլուծությունը ցույց է տալիս, որ 1970 թ.-ի համեմատությամբ 2010 թ. հանրապետությունում մինչև հարյուր բնակիչ ունեցող գյուղերի թիվը ավելացել է 3,3 անգամ (աղյ. 2): Եթե այդպիսի գյուղերը 1970 թ. կազմում էին ՀՀ գյուղերի 1,8 %-ը, ապա այժմ՝ 6,2%-ը: Նույն ժամանակաշրջանում 101–200 բնակիչ ունեցող գյուղերի թիվը հանրապետությունում ավելացել է մոտ 1,8 անգամ, 48-ից հասնելով 85-ի: Աղյուսակ 2-ից երևում է, որ 200-ից քիչ բնակիչ ունեցող մանր և փոքր գյուղերի թվաքանակի ավելացումը տեղի է ունեցել 201–500 բնակիչ ունեցող գյուղերի հաշվին, որոնց թիվը 1970 թ. համեմատությամբ նվազել է 62-ով:

Աղյուսակ 2

ՀՀ գյուղական բնակավայրերի և բնակչության թվի շարժն ըստ մարդաշատության խմբերի [1]

Գյուղական բնակավայրերի և բնակչության թվի շարժընթացը ըստ մարդաշատության (մարդ)		1970	1979	1988	1995	2010			1970	1979	1988	1995	2010
մինչև 50 բնակիչ	գք	4	13	10	11	**18**	500–1000 բնակիչ	գք	270	224	206	194	**169**
	գք%	0,4	1,4	1,1	1,3	**2,0**		գք%	29,0	24,5	22,7	22,0	**18,7**
	բն	0,16	0,40	0,32	0,33	**0,52**		բն	191,1	164,4	151,1	139,3	**117,3**
	բն%	0,0	0,0	0,0	0,0	**0,0**		բն%	18,8	15,8	14,1	11,4	**9,6**
	միջ	39	31	32	30	**29**		միջ	708	734	733	718	**694**
50–100 բնակիչ	գք	13	20	28	29	**38**	1000–3000 բնակիչ	գք	317	318	309	306	**319**
	գք%	1,4	2,2	13,1	3,3	**4,2**		գք%	34	34,7	34	34,7	**35,2**
	բն	1,1	1,5	2,1	2,4	**2,8**		բն	543	530,4	524,4	544,4	**556,5**
	բն%	0,1	0,2	0,2	0,2	**0,2**		բն%	53,3	51,1	48,9	45	**45,2**
	միջ	84	77	76	83	**75**		միջ	1712	1668	1697	1779	**1745**
100–200 բնակիչ	գք	48	52	67	57	**85**	3000–5000 բնակիչ	գք	41	50	53	68	**69**
	գք%	15,3	5,7	7,4	6,5	**9,4**		գք%	4,4	5,4	5,8	7,7	**7,6**
	բն	7,5	8,0	10,1	8,6	**12,7**		բն	157,7	182,9	201,1	258,7	**250,9**
	բն%	0,7	0,8	0,9	0,2	**1,0**		բն%	15,5	17,6	18,7	21,2	**20,4**
	միջ	157	153	151	152	**150**		միջ	3846	3658	3795	3804	**3636**
200–500 բնակիչ	գք	232	228	220	187	**170**	5000-ից ավելի բնակիչ	գք	6	11	16	29	**37**
	գք%	24,9	24,9	24,2	21,2	**18,8**		գք%	0,6	1,2	1,7	3,3	**4,1**
	բն	80,1	82,0	78,8	64,8	**54,8**		բն	37,0	68,9	104,6	197,0	**234,8**
	բն%	7,9	7,9	7,4	5,3	**4,5**		բն%	0,6	1,2	1,7	3,3	**4,1**
	միջ	345	360	358	347	**323**		միջ	6172	6263	6538	6793	**6346**
							Ընդամենը	գք	931	916	909	881	**942**
								գք%	100	100	100	100	**100**
								բն	1017,2	1038,5	1072,6	1219,2	**1230,5**
								բն%	100	100	100	100	**100**
								միջ	1093	1134	1180	1384	**1306**

գք – տվյալ քանակի բնակչությամբ գյուղական համայնքների թիվը; **գք**% – նույնը տոկոսով; **բն** – տվյալ խմբաքանակի գյուղական համայնքների բնակչության թիվը (1000 մարդ); **բն**% – նույնը տոկոսով; **միջ** – տվյալ խմբաքանակի գյուղական համայնքների միջին բնակչությունը:

Հանրապետությունում մանր և փոքր գյուղերի թվի ավելացումն ավելի արագ տեմպերով է տեղի ունեցել, հատկապես 1995–2010 թթ. ընթացքում և

մինչև 200 բնակիչ ունեցող գյուղերի թիվը այդ ժամանակահատվածում 97-ից հասել է 141: Այսինքն՝ ներկայումս հանրապետությունում բնակեցված գյուղերի 15,6%-ը կազմում են մանր և փոքր գյուղերը, այն դեպքում, երբ 1995 թ. այդպիսիք կազմել են ՀՀ գյուղերի 11,1%-ը, իսկ 1970 թ.՝ ընդամենը 7,1%-ը: Քառասուն տարվա ընթացքում հանրապետությունում մինչև 200 բնակիչ ունեցող գյուղերն ավելացել են մոտ 2,2 անգամ:

1970 թ. հանրապետության գյուղական բնակավայրերի 29%-ը ուներ 501–1000 բնակիչ և դրանցում ապրում էր երկրի գյուղական բնակչության մոտ 19%-ը: Անցած չորս տասնամյակի ընթացքում այդպիսի գյուղերի թիվը նվազել է 101-ով, իսկ դրանց բաժին է ընկնում ՀՀ գյուղական բնակչության ընդամենը 9,6%-ը:

Համեմատաբար կայուն է մնացել 1001–3000 բնակիչ ունեցող գյուղերի խումբը, որոնց թիվը մնացել է գրեթե նույնը, սակայն այդպիսի գյուղերի բնակչության բաժինը երկրի գյուղական բնակչության մեջ նվազել է 8,1 կետով (աղյ. 2):

Հաջորդ նկատելի փոփոխությունը ՀՀ գյուղական տարաբնակեցման մեջ, տեղի է ունեցել խոշոր և գերխոշոր գյուղերի խմբերում (3001–5000 և ավել բնակիչներ ունեցող գյուղերը): 1970 թ.-ի համեմատությամբ 3001 և ավել բնակչություն ունեցող գյուղերի թիվը հանրապետությունում ավելացել է մոտ 2,3 անգամ, 47-ից հասնելով 106-ի: Ընդ որում, առավել նկատելի է 5001 և ավել բնակիչ ունեցող գյուղերի թվի աճը՝ ավելի քան 6 անգամ: Ավելի քան 2 անգամ ավելացել է նաև 3001 և ավել բնակիչներ ունեցող գյուղերի բնակչության բաժինը, հանրապետության գյուղական բնակչության ընդհանուր թվաքանակում: Եթե 1970 թ. այդպիսի գյուղերում ապրում էր ՀՀ գյուղական բնակչության 19,2%-ը, ապա 2010 թ.-ին 39,5%-ը: Այսինքն՝ ՀՀ բնակեցված գյուղերի 11,7%-ին բաժին է ընկնում երկրի գյուղական բնակչության մոտ 40%-ը:

Ամփոփելով ՀՀ գյուղական բնակչության վերջին տարիների շարժընթացի արդյունքները կարող ենք նշել՝

- եթե մինչև նախորդ դարի կեսերը հանրապետությունում գյուղական բնակավայրերի բնակչության թվի նվազումը բնորոշ էր հիմնականում փոքր և միջին մեծության գյուղերին (առավելապես մինչև 500 բնակիչ ունեցող բնակավայրերին), ապա վերջին մեկուկես տասնամյակի ընթացքում, այդ երևույթը դիտվում է նաև բազմաթիվ մեծ, խոշոր և նույնիսկ խոշորագույն գյուղերում;
- գյուղական բնակավայրերի բնակչության թվի նվազում տեղի է ունեցել բոլոր մարզերում և տարածաշրջաններում, ավելի քան 400 գյուղերում ընդգրկելով նաև առավել նպաստավոր բնաաշխարհագրական և սոցիալ-տնտեսական զարգացման պայմաններ ունեցող մարզերի ու տարածաշրջանների մեծ, խոշոր և խոշորագույն գյուղական բնակավայրերը;
- ՀՀ հարյուրավոր գյուղական բնակավայրերում մշտական բնակչության թվի նվազման պատճառով ստեղծվել է անբարենպաստ ժողովրդագրական իրավիճակ, որի հետևանքով առաջանում են գյուղական բնակավայրերի տնտեսական, սոցիալական ու կենցաղային կյանքի կազմակերպման բազմաթիվ հիմնախնդիրներ:

Ըստ մարդաշատության խմբերի հանրապետության գյուղական տարաբնակեցման շարժընթացի արդյունքում, վերջին մեկուկես տասնամյակի ընթացքում, նկատելիորեն ավելացել է մանր և փոքր գյուղերի (մինչև 200 բնակիչ) բաժինը, հասնելով 15,6%: Համեմատաբար կայուն մնալով 1001–3000 բնակիչ ունեցող գյուղերի թիվը, սակայն 8,1 կետով նվազել է այդպիսի գյուղերի բնակչության բաժինը ՀՀ գյուղական բնակչության մեջ;

• ՀՀ գյուղական բնակչության շարժընթացի և դրանով պայմանավորված տարաբնակեցման համակարգում առաջացած հիմնախնդիրներն առավել սուր և տագնապալի բնույթ ունեն հանրապետության բարձրլեռնային և սահմանամերձ շրջաններում, որտեղ գյուղերի միջին մարդաշատությունը փոքր է և շարժընթացի նման միտումների պահպանման դեպքում մոտ ապագայում դրանք կկանգնեն բնազրկման վտանգի առաջ:

Այսպիսով, ՀՀ հարյուրավոր գյուղական բնակավայրերում առաջացել են սոցիալ-տնտեսական լուրջ հիմնախնդիրներ, որոնց լուծման համար մեր կարծիքով անհրաժեշտ է.

ա) իրականացնել տարածաշրջանային և ագրարային հատուկ քաղաքականություն, գյուղական բնակավայրերի արտադրատնտեսական բազան ամրապնդելու և գյուղական բնակչության եկամուտները ավելացնելու համար;

բ) ստեղծել անհրաժեշտ պայմաններ հանրապետության գյուղական բնակավայրերում ցանքաշրջանառությունից դուրս եկած հողատարածքները մշակելու համար: Հարկային և վարկային արտոնություններ սահմանել հանրապետության սահմանային և լեռնային ու բարձր լեռնային գյուղական բնակավայրերի գյուղացիական տնտեսությունների համար;

գ) մինչև 1000 բնակիչ ունեցող գյուղական բնակավայրերում, ծնելիության մակարդակը բարձրացնելու համար իրականացնել հատուկ ժողովրդագրական քաղաքականություն;

դ) գյուղական բնակավայրերից միգրացիայի նվազեցման նպատակով, հատուկ ուշադրություն դարձնել դրանցում՝ կրթական, առողջապահական և կենցաղային սպասարկման ծառայությունների բարելավմանը;

ե) մարզերի սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերում, հատուկ ուշադրություն դարձնել գյուղական բնակավայրերում՝ ներդրումային բարենպաստ միջավայրի ստեղծմանը, որը կնպաստի գյուղերում լրացուցիչ աշխատատեղերի ստեղծմանը (հանրապետության հարյուրավոր գյուղական բնակավայրեր ունեն զգալի ռեսուրսներ նաև գյուղական տուրիզմի զարգացման համար):

Սոցիալ-տնտեսական աշխարհագրության ամբիոն

Ստացվել է 09.06.2011

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. ՀՀ գյուղական բնակավայրերի բնակչությունն ըստ՝ ՀՀ վիճակագրական պետական ծառայության տվյալների 2006–2010 թթ.:
2. **Պոտոսյան Ա.** ՀՀ գյուղական տարաբնակեցումը: Եր., 1999:
3. **Մանասյան Մ.** ՀՀ տարաբնակեցման համակարգը: Եր., 2005:

А. А. ПОДОСЯН

НЕКОТОРЫЕ ВОПРОСЫ ДИНАМИКИ РАССЕЛЕНИЯ СЕЛЬСКОГО НАСЕЛЕНИЯ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

Резюме

В статье на основе анализа статистических данных даются результаты и тенденции динамики миграции и расселения сельского населения за последние полтора десятилетия. Особое внимание уделяется процессам, имеющим место в марзах за последние годы.

A. H. POTOSYAN

SOME QUESTIONS OF RURAL SETTLEMENTS DYNAMIC DISTRIBUTION IN REPUBLIC OF ARMENIA

Summary

On the base of statistical data analysis the results and trends of migration dynamics of population and settlements distribution during the last 15 years are given. Special attention was paid to processes in Marzes during the last years.